

մշակողների պատմութեան, Ա. Պրակ, Երուսաղէմ 1935, էջ 9):

Ս. Աստուածածնի տաճարը ունի չորս միապաղաղ եւ բոլորակ սիւներու եւ ութը կիսասիւներու վրայ սրբատաշ քարերով շինուած գաւիթ մը, որ երկու մուտք ունի: Անոր յատակը սալաքարով ծածկուած է, իսկ արեւմտեան դրան վրայ գրուած է՝ «... եցի... ես որդի Գայլաճազին միաբանեցայ սուրբ Աստուածածնիս, հաստատեցին մեզ Գ. պատարագ ի տաւնի Յովհաննու Կարապետին զկնի Յայտնութեան, զԱ. իմ հաւրն Գայլաճազին, զԱ. իմ մաւրն Մամաքին եւ զԲ. եղբարցն Բուսլանին եւ զԱղբերկանն... ի թվ. 208» (Արցախ, էջ 351. Արձագանք, 1888, էջ 117, ուր այս արձանագրութիւնը կը սկսի «Կաման Աստուծոյ Եզր որդի Գայլաճազին», իսկ «Ազգ. Հանդէս»-ի մէջ կ'ըսուի թէ թուականը «կարող է եւ 208 լինել», 1903, Ժ., էջ 20):

Դեռ մինչեւ 1892—1896 թուականը այս եկեղեցւոյ մէջ ժամերգութիւն կ'ըլլար (Արաքս, 1892, էջ 42. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 172, 175):

Երկրորդ եկեղեցին առաջինին պատկից է եւ կոչուած Ս. Գր. Լուսաւորիչ³: Շինուած է միւսին յար եւ նման: Աւագ խորանին վրայ արձանագրուած է՝ «Շնորհիւն Աստուծոյ եւ կամակցութեամբ եղբարցս եւ միջնորդութեամբ տէր Գրիգորիսի զբեցաւ յիշատակ եղբաւրս մերոյ Պետրոսն Արտաւազայ, միաբանք սուրբ ուխտիս սահմանեցաք ի տաւնի Դաւթի եւ Յակոբայ մատուցանել պատարագ ամենայն եկեղեցիքս զկէսն Արտաւազայ եւ զկէսն ամուսնոյն իւրոյ Աւթային, որ խափանէ դատի ի Տեառնէ»: Իսկ հիւսիսային խորանին վրայ՝ «Ի տաւնի սուրբ Խաչին Ա. աւրն պատարագ Խաչատուր վարդապետին եւ եղբարց իւրոց եւ ծնողացն, զի նոցա ընչիւք շինեցաւ խորանս»: Եւ հարաւային փոքր խորանին դրան վրայ՝ «Մառայն Աստուծոյ Գերգ եւ ամուսին իւր Կատայ եւ զաւակունք նոցին շինեցին իւրեանց ընչիւք զխորանս, Բ. աւր պատարագն նոցա է ի

³ Ս. Գրիգորին դրանը կան մարդահասակ երկու Խաչքարեր, որոնք ասուցիւն հիացումի առարկայ կ'ըլլան իրենց նրբին արուեստովը (Արձագանք, 1888, էջ 117. Հմմտ. եւ Արաքս, 1892, էջ 41, ուր եւ վանքին նկարագրութիւնը ինչպէս հմմտ. եւ Ջալալեան, Ճանապարհորդութիւն, Բ., էջ 357—360 եւ Սմբատեան, Գեղարքունիք, էջ 172—179):

տաւնի սրբոյն Գէորգայ, խափանողքն դատին ի Տեառնէ»:

Տաճարին ճակատակալ քարին վրայ կը կարդացուի՝ «Յուսովն Աստուծոյ Բ. եղբարքս Մարտիրոս եւ Գրիգոր եւ ամուսին Թամար միաբանեալ Եփրեմաւ շինեցաք զեկեղեցիս, վասն որոյ տնկեցաք եւ զայգիսն, տէր Յովհաննէս եւ միաբանքս ետուն նոցա պատարագ զեկեղեցիս Բ. տաւնն սրբոյն Գրիգորի զԲ. խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փիլարտի, Թամարին, Նազխաթուսին եւ Մատթէոսի, անխափան» (Արցախ, էջ 352):

Երրորդ տաճարը նուիրուած է Ս. Կարապետի եւ երկրորդէն աւելի փոքր է: Շինուած է սրբատաշ քարերով եւ քանդակազարդ են բեմն եւ խորհրդարանները: Անոր հարաւային որմին վրայ (արտաքուստ) գրուած է՝ «Ի ՈՁՁ եւ Գրիգոր որդի Ս... միաբանքս ետուն զաւագ խորան եկեղեցւոյս ինձ պատարագ»:

Նկատողութեան արժանի է Գետիկի զանգակատունը, որ եռայարկ եւ բարձր շէնք է, գրեթէ պատկից մեծ տաճարի գաւթին հիւսիսային կողմին: Գետնայարկը մառան է, որ ունի մեծ լուսամուտ մը եւ դուռ մը: Միջնայարկը զաղտնի պահարան է: Իսկ վերնայարկը խաչաձև շինուած է եւ ունի երկու սեղան՝ Գարբիէլ ու Միքայէլ չրեչտակապետներու անունովը: Չորստան կաթողիկէն շատոնց խոնարհած է: Անոր շինութեան պատմութիւնը արձանագրութիւն մը կը հաղորդէ: «Կաման Աստուծոյ ամենակին ի թվիս 20. մենք երկու եղբարքս Գասապետ վարդապետ եւ Կարապետ եղաք հիմն եւ ի վերայ եղաք զանգակատուն եւ եկեղեցի յանուն Հրեշտակապետացն Գարբիէլի եւ Միքայէլի սակաւ ընչիւք մերովք եւ քեռոյն մերոյ Իգնատիոսի, արդեամբք բազմօք եղաք եւ պարխսպ շուրջ եկեղեցեաւքս եւ այլ աշխատութիւնս ըստ մերում կարի, Սարգիս վարդապետ հայր վանիցս եւ միաբանքս հաստատեցին Չատկին եւ Ճրազարցին պատարագ, յոր եկեղեցին Գասապետ վարդապետին եւ Կարապետին սահմանեցին: Արդ աղաչեմ զամենայն ժառանգաւորսք յիշման արժանի արարէք զամենայն աշխատեալսն ի սմա, եւս առաւել Չաքէոսն

⁴ Ի. Յարութեանն կը կարծէ թէ այս զանգակատունը այն մատենադարանն է, զոր Կիրակոսի աւանդութեան համաձայն Մարտիրոս առաջնորդը շինած է (Ազգ. Հանդ., Ժ., 1903, էջ 34—35):

եւ Գրիգորն» (Արցախ, էջ 353. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 367):

Այս եկեղեցիներէն զատ Գետիկ վանք ունի քանի մը մատուռ՝ նուիրուած Ամենասուրբ Հոգւոյն, Ս. Կարապետի, Ս. Առաքելոց ու Ս. Հովսիփեանց⁵:

Հաւանականորէն առաջին մատուռն մէջ Մխիթար Գօշ թաղուած ըլլայ, իսկ չորրորդ մատուռն կաթողիկէին վրայ գրուած է. «Չ. Տէր Աստուած որդրմեա Խաչատուր վարդապետին եւ Բարսիլէ շինողաց եկեղեցւոյս եւ ամենայն աշխատողացն ի սմա» (Արցախ, էջ 354):

Գետիկի մէջ կան դեռ ուրիշ արձանագրութիւններ՝

«Կաման Աստուծոյ եւ Գրիգոր Հիջուր ամիր սպասալար Աւազին որդի Սմբատա որդւոց մեծին Վախտանգա... պետաց աշխարհին Արցախայ առեալ Աթաբակի Իվանէի սնոյց զիմ եւ իւր տանն Աւազին առաջնորդ կացոյց, զի ոչ ունէին զաւակ յուսով ինդրեցի զայս եկեղեցին շինման հանգստեան, Աւազն ինձ երեւ եւ միաբանքս սահմանեցին զայս խորանս պատարագել ինձ զԲրիստոս հանապազ, որ կարգայք Աւազին երկար կենդանութեամբ ինդրեցէք եւ Գրիգորոյս մեղաց թողութիւն...»:

«Կաման Աստուծոյ եւ մեղուցեալ ծառայ Մելքներքս որդի Վասակայ եւ Սարգիս աւագ պարոն միաբանեցաք Աստուածածնիս, իմ հալալ ընչից զնեցի յԱռինձք մի այգի է ծածնիս, որ շէն պահեն. միաբանքս տուն ինձ է պատարագ Մատգաղար աւրն...»:

Գոհար կը միաբանի եւ մէկ պատարագ կը ստանայ Ս. Կուսի Աւետուածի օրը: Մխիթար վարդապետը կը միանայ եւ երկու պատարագ կ'ընդունի Խաթունին ու Սարգսին:

Խարդաւր միանալով երկու պատարագ կ'առնու:

Մխիթար քահանան միաբանելով մէկ պատարագ կը ստանայ:

Ս. Սարգսին տօնին երկու պատարագ կը տրուի Սարգսին, Մարտիրոսին եւ Թորոսին:

⁵ Մխիթար Գօշ կը յիշէ նաեւ Ս. Գողգոթի՝ «Գրեցաւ յանապատիս Գետիկայ ընդ հովանեաւ սրբոյն Գողգոթայի եւ Լուսաւորչին Գրիգորի...» (Հ. Հ. Ոսկեան, Մատենադրական քննութիւններ, Վիեննա 1926, էջ 186):

Մխիթարին ու Մայրխաթունին Ս. Սարգսի տօնին պատարագ մը կը յատկացուի:

Ս. Յակոբի տօնին Մարգարէին պատարագ մը կը նշանակուի:

Ս. Գէորգի (Ս. Գրիգորի) տօնին մէկ պատարագ «Աստուածատուր քահանային է անխափան»:

Ս. Հոգւոյ զալստեան տօնի պատարագը Հայերթին ու Վահրամին համար կը գրուի:

Փիլիպպոս Առաքելի տօնի պատարագը Սարգիս սարկաւազին համար կ'արձանագրուի:

Անդրէաս Առաքելի տօնի պատարագը Յովհաննէս Վանակին կը խոստացուի:

«Ես Մխիթար հիւսն միայրան եւ աշխատողս եկեղեցւոյս... եւ մինչ ծերութիւն շինեցի զդրունս աղաթից»:

Կիրակոս վարդապետ (գուցէ Գանձակեցի, հմմտ. Ազգ. Հանդ. 1903, Ժ., էջ 20) իր նպատակներու փոխարէն Թաղէոս առաքելոյն օրը երկու պատարագ կ'ընդունի, իսկ յայտն Ս. Աստուածածնի տօնին մէկ պատարագ:

«Ի տաւնի սրբոյն Գէորգայ ա. պատարագ Շէհանշահի է անխափան»:

«Այս է հանդիստ Մկրտիչ տէր ի ՌձԻԿ (1675)»:

«Սարգիս սարկաւազ կէսօրեայ փոխեցաւ ի սուրբս յիշեցէք»:

Բարակէս եւ Վրթանէս եղբայրներու երկու պատարագ, Խաչատուրին՝ Ս. Բարսեղի տօնին երկու պատարագ, Խաչաբեկի տօնին Սրբէկի եւ Ապանայի մէկ պատարագ, Ս. Կիրակոսի տօնին Նսեփանոսին մէկ պատարագ, Հայրապետին՝ Ժ. պատարագ, Ս. Բարսեղի տօնին Բարսեղին մէկ պատարագ, Մասեղի տօնին Բարսեղին մէկ պատարագ, Մաղարդին՝ Եղիսաբէթին մէկ պատարագ, Աստուածածնի տօնին Սմբատ Չառնամսի երկու պատարագ կը նշանակուի:

Ս. Ստեփանոսի տօնին՝ Ստեփանոսի, Ս. Սարգսի տօնին՝ Սարգսի, Աւագ հինգշաբթին՝ Բջնեցի Գինէի, Ս. Հոգւոյն տօնին՝ Մխիթարի, Գայլին եւ Աւագուխտին երկու պատարագ կը նշանակուի:

Սոցազեկ Համբարձման տօնին մէկ պատարագ կը ստանայ:

Խաչի տօնին Ենթի երկու պատարագ կը տրուի:

ներու սիրելի վանքերէն եղած է եւ տիրացած բաւական շատ հողերու: Եղեր է եպիսկոպոսանիստ եւ մինչեւ վերջերս իր գոյութիւնը պահած (Սմբատեան, Գեղարքունիք, էջ 171—179 եւ Արաքս, 1892, Բ., էջ 40—42 եւ Մշակ, 1911, Թ. 16, 17 եւն): Տուած է Հայութեան մատենագիրներ եւ գործող անձեր եւ արդարացուցած իր վրայ շուայուած հողն ու ծախքը:

4. ԿԱՊՏԱՎԱՆՔԸ

Կը գտնուի Ղոզանի արեւմտեան կողմը՝ անտառապատ սարահարթի վրայ: Երևում է կապտագոյն մեծ եւ անտաշ քարերով եւ այս հանգամանքին կը պարտի իր անունը: «Վանքս կառուցեալ է չորս կամարների վերայ, որոնց ոտքերը գետեղուած են պատերում» (Արցախ, էջ 332) խաչածեւ է չինուածքը մենաստանին, որ ունի աւազ խորան մը, չորս փոքր խորաններ, երկու դուռ, սիրուն կաթնուղիէ մը եւ 11-50 մետր երկարութիւն եւ 9 մետր լայնութիւն: Չայս «Ո» թուականին Հանէս իր «արդեամբ» շինած է եւ ինչպէս նա՝ նմանապէս Աջիշէր — որդի Գրիգորի —, համաձայն արձանագրութիւններու, պատարագ կը ստանան (Արցախ, էջ 332):

Միարաններու սենեակները փոքր եղած են:

5. ՄՈՅՐՈՅ ԶՈՐՈՅ ԿԱՄ ԾՈՎԱՆԷՎ ՎԱՆՔԸ

Սաչթարակ գիւղի հարաւային կողմը՝ շինուած է այս վանքը, որ ունի 7-20 մետր երկարութիւն եւ նոյնքան լայնութիւն: Սաչածեւ է եւ սրբատաշ չեչ քարերով հիւսուած են իր պատերը:

Հոն կան հետեւեալ արձանագրութիւնները՝

«Թ. ՈԿԶ. եւ Մխիթար եւ ամուսին իմ միարանեցաք եկեղեցւոյս եւ ետուն մեզ ժամ Աստուածածնին Բ. մին ինձ, Ա. Հարկեւորին...»:

«Ես Սասնայս միարանեցայ իմ որդաւքս Մորոյ-ձորոյ Աստուածածնին եւ հայրս Գրիգոր եւ այլ միարանքս ետուն ինձ Բ. ժամ զՎարդավառին շարաթ աւրն եւ զԿիրակէն, Ա. աւրն ինձ, Ա. Եռչանկան»:

«Ես Գեաւրկի թագաւորաց թագաւոր ետու զՄորոյ Չորոյ վանս հայր Յովհաննէս եւ արարի ազատ յամենայն հարկէ. ամիր Բրտին հողացողութիւն (թեամբ) որ ինձ ա-

ղաւթս անեն, որ մեր հրամանացս հակառակ լինի, Աստուծոյ հրամանին է հակառակ, հաստատ է գիրս անուամբ Աստուծոյ»:

«Ես հայր Գրիգոր... վանքս շինեցի Աստուածածնին...» (Արցախ, էջ 342):

«Ի թՎ. Հայոց ՈԿԲ, թագաւորութեան Գիրազէ մեք որդեք սպասաւար Սարգսի Աթաբէզի եւ ամիր սպասաւար Զաքարէ առաւելիքս Հայոց յանաւրինաց... շինեց որ վաղուց հետէ աւերակ կայր գորութեամբն Աստուծոյ. արդ Աստուած սիրեաց զնա առ ինքն տարաւ (տր) տմալի եւ Աթաբակի Իւանէ ետուն (ն) ուղղել (նորոգել) զսուրբ Աստուածածնին վասն յերկար կենդանութեան Աւագին եւ Ծ... վանէ սպասաւարին, որ անցաւոր... Ա. զաւր մեծ Զատկին եւ զճրագալուցին ժամն իմ հարագատին կատար(են) Տեանն Գրիստոսի... (նորո)գեցաւ սուրբ Աստուածածնինս առաջնորդութեան հաւր Եւազրի հեղի եւ խոնարհի եւ հաստատեցի զսա առաջնորդ յազգէ ազգ մինչեւ յաւտեան» (Արձագանք, 1888, էջ 100):

«Կամաւն Աստուծոյ եւ Յովհաննէս միարանեցայ Աստուածածնինս եւ հայրս Գրիգոր եւ այլ միարանքս ետուն ինձ Ե. ժամ զեկեղեցին. ի նաւասարգի առաջին աւր, Յովհաննէս տաւն եւ Գ. աւր յետ իւր այլ Գ. ինձ եւ Բ. ամուսնոյ իմոյ...»:

«Կամաւն Աստուծոյ եւ ողորմութեամբ թագաւորեալ Գիրազի, եւ Ամիր Բուրաս առի զգիրս առաջնորդութեան ի թագաւորէն սուրբ Աստուածածնինս եւ հայրն Ովանէս ետ ինձ ի տաւնի Ա. ժամ զճառագաւարն» (Արձագանք, 1888, էջ 100):

Ահա այս արձանագրութիւններն են, որոնք Մոյրոյ ձորոյ վանքի պատմութիւնը մեր առջեւ կը պարզեն եւ անոր առաջնորդներէն՝ Գրիգորի, Յովհաննէսի ու Եւազրի անունները պահած: Այսօր ամայի է եւ միարաններու սենեակները նոյն իսկ հերկուած են (Արցախ, էջ 342):

6. ԵՆՄՈՒՐԱՍԱՅ ԿԱՄ ԳԵՏԱԿԻՑ ՎԱՆՔԸ

Հախում գիւղի մերձ, Հասան գետին ձախ ափին: Երևում է խաչածեւ եւ տաշուած մոխրագոյն չեչ քարով: Ունի աւազ խորան մը եւ չորս հատ մէկ մէկու վրայ շինուած փոքր խորան: Երկարութիւնն է 9 մետր եւ լայնութիւնը՝ գրեթէ եօթուկէս մետր: Կաթնուղիէն զեկեղեցի է:

Գաւիթը հարաւային դրան վրան է: Անոր արեւելեան կողմը խորան մը կայ, որուն ճակատակալ քարին վրայ արձանագրուած է՝ «Յամի Կ. երրորդի եւ երրորդի նորո շրջակայիս (1181), եւ տէր Գրիգոր շինեցի խորանիս Աստուածարնակ հրամանաւ Սարգոնո մեծի իշխանի վասն յիշատակի ննջեցելոց իւրոց եւ յաւտեանկանութիւն անձին իւրոց, որք սպասաւորէք ի սմա, զիս գտէր Գրիգոր եւ զճնողս իմ յաղաւթս յիշեալիք, ընդ նմին եւ զայլ ազգատոհմս» (Արցախ, էջ 335):

Հետեւաբար հին վանք մըն է: Ունեցած է շրջապարիսպ, միարաններու սենեակներ եւ գերեզմանոց: Ընդունած է նուէր ու նպաստ եւ ստանձնած պարտականութիւններ:

Բարխուդարեան Երմուրատի հին անունը կը կարծէ ԸԼԼԱԼ Գետակից, ուր Աղսարդան իշխանը կրօնաւորեցաւ (Պատմութիւն Աղուա-նից, էջ 188. հմմտ. Կիր., Պատմ., էջ 73): Նից, էջ 188. հմմտ. Կիր., Պատմ., էջ 73): Նից, էջ 188. հմմտ. Կիր., Պատմ., էջ 73): Նից, էջ 188. հմմտ. Կիր., Պատմ., էջ 73):

«... ի հռչակաւոր վանքս Գետա... ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնինս եւ... Ս. Ստեփանոսիս» (Թօփճեան, Յուց. հայ. Զեռ. Դարեան Վ. ի, Բ., էջ 30—31):

7. ՍԱԼԱ ԳԻՒԳԻ ԱՆԱՊԱՏԸ

«Մրդուզ սարի արեւմտեան ստորոտում, Սալա գիւղի մօտ կայ մի փոքր վանք՝ անպատ անուն՝ շինուած սրբատաշ քարով» (Արցախ, էջ 348):

8. ՍՐԱԵՂԻ ՎԱՆՔԸ

Հիմնուած է Համգա սարէն դէպի Ուզուն-Թալա խոնարհած Լեոնարազիին հարթակի վրայ: Հիմերը քարով, իսկ մնացած մասերը թրծուած աղիւտով եւ կրացեխով շինուած: Ունի չորս փոքր եւ մէկ մեծ կամ աւազ խորան, երկու լուսամուտ, վեղարածեւ կաթնուղիէ մը եւ երկու դուռ: Վէժ քարի վրայ գրուած է՝ «Կանգնեցաւ սուրբ Նշանս ի բարեխաւսութիւն Ո. ամի»: Հիւսիսային որմն վրայ կայ՝ «Թիւ ՈԱ. եւ Արտաւազ եւ Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննիսի...»: Իսկ արեւելեան

հիւսիսային կողմը՝ «ՈՅ թուին, եւ Անանիաս որդի սուրբ ուխտիս բարեխաւսութեամբ աւրն աղաթ... երկրպագէք»:

Սրվեղի վանքը քանի մը անգամ նորոգուած է: Արեւմտեան որմն վրայ կը կարդացուի՝ «Ես Ասղոհի տղայ Մխիթարս սուրբ Սրվեղի Բ. դուռս շինեցի (նորոգեցի) ով կարգայ, ողորմի ասի թՎ. ՌձՆԱ»:

Միարաններու սենեակներն ու շրջապարիսպը աւերուած են: Սրվեղ վանքի անունը «բացատրում են երկու տեսակ իմաստով, Ա. վեղարի նման սրածայր կաթնուղիէ ունեցող վանք. Բ. սարուհող — շիկահող — վանքատեղ» (Արցախ, էջ 340): Գաղիկեան՝ Ջալալեանի բացատրութիւնը (Ճամբորդութիւն, Ա., էջ 159) «որ ընկալաւ զայս անուն կամ ի սրութենէ վեղարին այսինքն կաթնուղիէին, որ է սուր (կամ ի սրածութենէ որով մեռան բազմաթիւ քրիստոնէացի զազանաբարոյ ազգէն Ղեկաց ի մէջ մենաստանիս ըստ աւանդութեան ծերունեաց) կ'ընդունի իրրեւ «սրախօսութիւն» (Արձագանք, 1888, էջ 100): Գ. Յ. Ջալալեանի մեկնութիւնը բոլորովին կամայական կը գտնէ եւ կը մտախորհրդաբար «Սուրբ հող» ի աղաւաղում նկատել (Մեղու Հայաստանի, 1883, Թ. 91):

Վերոյիշեալ արձանագրութիւններէն պայծառ կ'երեւայ՝ թէ Սրվեղի վանքը ԺԲ. դարու հիմնարկութիւն է:

9. ՎԱՐԱԳԱՅ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՄ ԱՆԱՊԱՏ ՎԱՆՔԸ

Վասպուրականի հռչակաւոր Վարագայ Ս. Նշանի այս համանուն վանքը՝ շինուած է Հասան վտակի ձախ ափին՝ թանձր անտառներով եւ ալիւնահող տեսարանով օժտուած սարահարթի մը վրայ: Երևում է յարեւմտայն Գանձասարի բայց երկնադոյն սրբատաշ քարերով: Ունի աւազ խորան մը եւ 8 փոքր խորան, զեկեղեցի կաթնուղիէ եւ երկու դուռ: Ջալալեան կը գրէ՝ «Երևումք ուխտիս են շքեղ, խոյակաղ եւ վիմարդեան երկնամասն կաթնուղիէ սորա սքանչելի է յոյժ» (Ճամբորդութիւն, Ա., էջ 160):

Հարաւային դրան ճակատակալ քարին վրայ փորագրուած է՝ «Երկնցաւ եկեղեցիս կամար Յովհաննէս վարդապետի հրամանաւ եւ իշխանութեամբ իշխանայ իշխանի Վասա-կայ որդւոյ... պոռնկի բարաս (?) եւ սահ-նակեցար շարաշար» (Թերիմաստ):

Տաճարին հիւսիսային որմին վրայ (ներքուստ) կայ՝

«Ի թվ. ՈԶ ընդ այլ աշխարհս հոլովս հարաւ դաւազան եւ ցասունն Աստուծոյ դաւառն Խլաթա ի ձեռն Խորագմին եւ Թամթարին, ընդ որս եւ մեծահոգակ սուրբ ուխտս Վարազին շինեցեալ վասն մեղաց մերոց յայսմ ամի. ես Ղուկաս հայր Վարազայ առեալ զտիեզերահամբաւ սուրբ Նշանն զչնորհեալն յԱստուծոյ ի փառս մարդկան ի ձեռն Պատրոնիկեայ եւ սուրբ Հովսիփմեանց եւ Թողկաւս մեծ ամ շրջեցայ թափառեալ ի տեղոյ ի տեղ, ապա ի կամսն Աստուծոյ աւմենատես խնամոց Տեառն հասի ի Նոր բերդն առ քրիստոսասէր իշխանն Վասակ յաստուածարնակ անապատ կոչեցեալ վանքս եւ ազդումն հնչեալ առ իս հաճոյանալ սուրբ Նշանին ի տեղոջս, նկարեցի եւ զգեղաղէշ եկեղեցիս արժանի հանգստեան սորա մեծարեալ ի Քրիստոնէիցս առի զվանքս եւ ետու զխաչս եկեղեցիս այս միջնորդութեամբ եւ վկայութեամբ տեսնն Յովհաննու շինողի եկեղեցոյս առաջի հրեշտակաց եւ մարդկան եւ հաստատեցաւ ինձ ի տաւնի սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, Յակովբայ եւ Յովհաննու յամենայն եկեղեցիս պատարագ: Այդ եթէ ոք հանել ջանայ աստի կապանս եւ անէծս ժառանգեացէ ի հոգի եւ ի մարմին անբռնելի ի սուրբ նշանէս եւ յամենայն սրբոց Աստուծոյ: Որչափ այս եկեղեցիս շէն է, մի ոք իշխեսցէ զխաչս հանել եւ զիմ յիշատակս խափանել, ապա թէ ոչ նախ զինքն ջնջեացէ ի կենաց գրոցն եւ յիշմանէ Աստուծոյ. ասասցեն հրեշտակք եւ մարդիկ, եղիցի, եղիցի¹²»:

Արեւմտեան դրան ճակատակալ քարին վրայ կայ՝

«Ի թվին ՈԶԶ (1237) ես Վասակ որդի Դաւթի, որդւոյ Վասակայ ի տանէ Բագրատունի ի տոհմէ Դաւթայ մարդարէին ի ձեռն Յովհաննու եւ ընծայեցի զԾաղկազուզի իւր կապարոփն ի վանս ի Քրիստոս եւ հաւանութեամբ եղբարցս հաստատեցաւ ինձ պատարագ յայտնութիւնս եւ զատկին յիմ շինեալ մեծ եկեղեցիս, որպէս իմ հաւրն յիւր շինեալ փոքր եկեղեցին զրեցաւ եւ կնքեցաւ աւնումբ Աստուծոյ, յաւուր յորում Վարա-

զայ հայրն Ղուկաս զսուրբ նշանն եղ յեկեղեցիս: Արդ եթէ ոք զմեր տուեալ գիւղերս ի մեր եկեղեցոյս հանել ջանայ եւ զմեր յիշատակն խափանել, թէ քրիստոնէայ է՝ ի Քրիստոսէ եւ յիւր ընտրելոցն է նոյնված...» (Արձագանք, 1888, էջ 89. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 369. Արցախ, էջ 336—338):

Վարազայ վանքը ունի հրաշալի գաւթ մը, որ 14.5 մետր երկարութիւնս եւ 13.20 մետր լայնութիւնս ունի եւ հետեւեալ արձանագրութեամբ օժտուած՝ «Թվ. ՉԺ կամաւն Աստուծոյ ես Հայրուստ վայելեալ զճրիպարժ իշխանութեանս եւ հասեալ յայտեղի՝ զարհուրեցայ ի սպառնալեաց եւ գիւմեցի յեղբարանոց անապատիս, առ ոտս տէր Յովհաննէս շինողի սուրբ ուխտիս եւ ստացայ զտնակս սակս յիշատակ ինձ եւ իմոցն...»:

Վարազայ վանքը, ինչպէս արձանագրութիւնները կը վկայեն ունեցած է երկու եկեղեցի: Չանոնք շինել տուողներն եղած են Դաւիթ եւ Վասակ Բագրատունիները եւ տէր Յովհաննէս՝ գործին հողին ու մղիչը: Եկեղեցիներէն մին կնքուած է Ս. Աստուածածին անուամբ:

Կիրակոս Գանձակեցիին հետեւեալ կարեւոր տողերն ունի՝ «Ընդ սա խարէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նորբղին, զի էր նա յազգէն Բագրատունեաց, հայրն Վասակայ իշխանին որ շինեաց զեկեղեցին հրաշագան ի վանքն, որ Անապատ կոչի հուպ ի Նորբերդն, առաջնորդութեամբ եւ ձեռնտուութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննիսի Տուեցոյ...: Յիշխանութեան Վահրամ իշխանին եղեւ աւարտումնս եկեղեցոյն, որ օծաւ եւ կնքեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին» (Պատմ., էջ 72—73):

Հաւանականարար (Անապատ) վանքը Ղուկաս վարդապետի ձեռքով Վարազայ Ս. Նշանի փոխադրութենէն յետոյ՝ Վարազայ վանք կոչուած ըլլայ — պաշտօնապէս:

Վարազի վանքի մէջ կան զեռ ուրիշ քանի մը արձանագրութիւններ, որոնք կը մատնանշեն անոր բարեբարներն եւ անոնց յատկացուած պատարագներն ու ժամերը, այսպէս՝

1. Նոր կիւրակէին Ե. պատարագ Զուրջին:
2. Յովհաննու եւ Յակոբայ տօնին մէկ պատարագ:

¹² Հմմտ. Զալալեան, Ճամբորդութիւն, Ա., էջ 160—161 ուր ձեռագրէ մը քաղուած է այս արձանագրութիւնը: Զալալեան խաչին վրայ արձանագրուած գիտէ՝ «Սուրբ խաչ տէրուեական շէր Դաւթայ աւղնական յաւուրն անկրական» (էջ 160):

3. Քրիստոսի տօնին Բ. ժամ Մխիթարի եւ Գորանդուխտի:

4. Ս. Խաչի տօնին Գ. պատարագ էլբէկին:

5. Թէոքոսի տօնին Ա. ժամ Թոտորին եւ Խաթունին:

6. «Ի կամս Աստուծոյ ես տէր Յովհաննէս պարոն Վասակայ եղբարցս կամակցութեամբ Բ. աւր պատարագ գրեցաք երկուց հարազատաց Գրիգորոյ եւ միւս Գրիգորին ի տաւնի Ս. Աստուածածնին... թվ. ՈՂԹ»:

7. Բարսեղի տօնին մէկ պատարագ Արբահամին:

8. Յակոբայ տօնին Բ. ժամ Հայրապետին եւ Խաթունին:

9. Ս. Սարգսի կիւրակէին Ե. պատարագ Սիրադիշայ որդեացն:

10. Տէր Յովհաննէս խորան շինել կուտայ եւ Դաւիթ որդի Վասակայ կը վկայէ թէ՛ «Շինեցի զանապատս իմ իշխանութեանս ձեռամբ վարդապետին Մխիթարայ եւ ի Ոնիթվիս շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւր Գրիգորի եւ նորին միաբանեկի Պետրոսի եւ եղբարցն նորա Յովհաննիսի եւ Ազարիայի եւ ետու հող ի Տանձկուր եւ յեզեր զետին եւ զգրախան ընկուզի ջրաղացէն Համազոյ մինչեւ յընկուզուտն Խարարի եւ ջրաց մի եւ ի Բաւն այդի եւ շինական մի եւ ետուն ինձ Զատիկին աւուրն եւ զճրագալոյցին ժամն...» (Արձագանք, 1888, էջ 89—90):

Գուցէ Վարազայ այս վանքին է որ՝ մաստեալ Յարութիւն իրեններովը Աւետարան մը յիշատակ կը դնէ՝ «...ի վայելումնս առաջնորդ Գրիգոր վարդապետին ի թվ. Ռ. Ե. Ե. ի, զեկտեմբերի...» (Լալայեանց, Յուլ. հայ. Զեռ. Վասպ., էջ 524):

«Վարազայ վանքը այժմ ամայի է, Հախումի եւ Շամշաղինու միւս գիւղերի բարեպաշտ կանայք երբեմն ուխտ են գալի նորան, հիւանդաց բժշկութիւն խնդրելով» (Մեղու Հայաստանի, 1883, Թ. 92):

«Մենաստանիս հարաւային կողմին կից է մի այլ վանք իր գաւթով միասին» (Արցախ, էջ 338) զոր շինել տուած է Վասակի հայրը Դաւիթ Բագրատունին (հմմտ. վերը): Այժմ խոնարհած է գաւթին զլուխը:

10. ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԲԱՐԱՅՐԸ
Չեմ կարծեր որ Վանական վարդապետի ճգնատեղին, որ «կայ հանդէպ գեղջն, որ

կոչի Լորուտն ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի (Կիր. Գանձակեցի, Պատմ., էջ 129) վանք եղած ըլլայ՝ յատուկ իմաստով:

Լորուտ՝ այժմ աւելի ստէպ գործածուած Շլորուտ, Զօրաւոր գիւղին մերձ է (Արցախ, էջ 328):

11. ԱԻՇՈՊԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ԶՈՆՏԱԿ ՎԱՆՔԸ

Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «...Ես անարժան գրիչս Աթանաս... գրեցի զսուրբ Աւետարան ի թուականիս Հայոց ԶԼԷ ի սուրբ ուխտս Աւետարայ ի դուռն սուրբ Աստուածածնին...»: Բարխուդարեան կը գրէ՝ «Ծոպ էր կոչուում ի հնումն այժմեան Դիլիջանի ձորն, իսկ Աստուածածնայ վանքն այժմ անմարդարեակ է, որ կոչուում է Զոխտակ վանք» (Արցախ, էջ 297): — Արցախի Բուստի գաւառին մէջ կայ Դիլիջան անուն գիւղ մը¹³ (անդ, էջ 356):

(Շարունակելի): Ը. Ը. ՈՍԿԱՆ

ՄԸՂԱՔԻՆ Վ. ԳԵՐՋՆՍԻ († 1545)
ՏԵՂԱՆԵՑ, ԶԻՆՆԵՐԸ ԵՒ ԲԵՐԵԳՈՐԺ

Դերջանի Փողձայ գիւղն եղած է Մաղաքիայի ծննդավայրը. ըստ ան նախընտրած է գաւառին անունով կոչել ինքզինքը Դերջանցի: Քահանայական տան գաւակ էր. հայրը, Մկրտիչ քահանայ, ուղարկած է իր որդին Մուշ (1500), որպէս զբ ուսանի Մշեցի Գրիգոր վարդապետի «համալսարանը» Գլակայ վանքին մէջ¹: Այն տեղ էր Մարտիրոս արեղայ, որ 1505ին օրինակած է Աւետարան մը «ի գաւառիս Տարօնոյ, ի վանս Գլակայ, ի դուռն սուրբ Կարապետին, ի համալսարանս Գրիգոր քաջ բարունոյն եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Մելքիսէթ արհեպիսկոպոսին²»: Ինչպէս կ'երեւայ խոստպահանջ էր Գրիգոր վարդապետ. Մաղաքիա իր ուսման ընթացքը աւարտելու համար հարկադրուած էր առ ոտս Վարդապետին

¹³ Տես Օժոպու վանք ի Սիւնիս, Ալիշան, Սիւսական, էջ 483:
¹ Ինքնակենսագրութիւն (տե՛ս վարը):
² Հոռոմ, Վատիկ. Մատենադարան, Բորլեան Թ. 7. Tisserant, Յուլյակ, էջ 24: